

Հաստատում եմ՝ 15 մարտի 2024 թ.
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Գիտական գծով պրոռեկտոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Ավետիսյան Պարզն Սերգեյի



ԿԱՐՇԵՂ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Համիկ Թաթուլի Բիշարյանի «Բառապաշարային փոխներթափանցման հաղթահարումն աշակերտների անգլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում» ԺԳ.00.02 – Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Օտար լեզուների ուսուցման գործընթացում կարևորվում է բառապաշարային փոխներթափանցման կանխարգելման և հաղթահարման հիմնախնդիրը: Հետազոտության արդիականությունը հիմնավորված է հավուր պատշաճի: Այն պայմանավորված է անգլերենի ուսուցման գործընթացում փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունների բացահայտման, կանխարգելման ու հաղթահարման մեթոդական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ: Ատենախոսը հետազոտության առաջադիր խնդիրները լուծելու ընթացքում քննության առում է բազում հիմնախնդիրներ, որոնք վերաբերում են սովորողների քննադատական, ստեղծագործական մտածողության զարգացմանը, խոսության, միջմշակության փոխներթափանցման հաղթահարմանը և այլն:

Ատենախոսության նորություններից մեկն այն է, որ հեղինակի կողմից վերլուծվել են ՀՀ հիմնական դպրոցի անգլերեն դասագրքերը բառապաշարային փոխներթափանցման հաղթահարման տեսանկյունից: Ատենախոսին հաջողվել է մշակել փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունների կանխարգելման և հաղթահարման մեթոդական համակարգ: Արժանահավատ են փորձարարական ուսուցման արդյունքները, որոնք հիմնավորում են առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Կասկած չի հարուցում նաև այն, որ ատենախոսի կողմից մշակված նախագծային առաջադրանքների և հաղորդակցական վարժությունների համակարգը կարող է կիրառվել հանրակրթական դպրոցում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ատենախոսը հստակորեն հիմնավորում է թեմայի արդիականությունը, ձևակերպում է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, հետազոտության վարկածը, սահմանում է հետազոտության գիտական նորոյթը, առաջադրում է պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին «Լեզվական փոխներթափանցումը, դրա տեսակները և հաղթահարման տեսական հիմունքներն անգլերենի, որպես օտար լեզվի, ուսուցման գործընթացում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին «Լեզվական փոխներթափանցումը և դրա դասակարգման տարբերակները» ենթագլխում ատենախոսը սահմանում է «լեզվական փոխներթափանցում» հասկացությունը, քննության է առնում այդ եզրույթը և դրա դերն օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Երկրորդ «Օտար լեզուների յուրացման գործընթացում լեզվական փոխներթափանցումը կանխարգելելու հիմնական մոտեցումները» ենթագլխում ատենախոսը բացահայտում է լեզվական փոխներթափանցման առաջացման պատճառները: Դրական միտում է այն, որ ատենախոսը քննության է առնում բառապաշարային փոխներթանցման հիմնախնդիրը լեզվական սխալների բացահայտման, կանխարդելման, հաղթահարման տեսանկյուններից:

Երրորդ «Բառապաշարային փոխներթափանցումը և դրա տեսակները» ենթագլխում ատենախոսը սահմանում է «փոխներթափանցող բառապաշար» հասկացությունը, վերլուծում և դասակարգում է դրա տեսակները՝ ըստ լեզվական միավորների բնորոշ առանձնահատկությունների, ըստ խոսքի մասերի պատկանելիության, ինչպես նաև ըստ առաջացման բնույթի և ուղղության:

Ատենախոսության երկրորդ «Հաղորդակցական անգլերենի ուսուցման գործընթացում բառապաշարային փոխներթափանցման հաղթահարման մեթոդական համակարգը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին «Աշակերտների հայտորոշիչ թեստավորում, փոխներթափանցող բառապաշարային միավորների իմացության ստուգում» ենթագլխում ատենախոսը վերլուծում է ՀՀ հանրակրթական դպրոցի 5-ից 8-րդ դասարանների անգլերեն առարկայական և A1, A2, B1, B1+ ու B2 մակարդակի ժամանակակից դասագրքերը փոխներթափանցող բառապաշարի ընտրության և կիրառման տեսանկյուններից:

Երկրորդ «Փոխներթափանցող բառապաշարի ուսուցումը հաղորդակցական առաջադրանքների համատեքստում» ենթագլխում Հասմիկ Բիշարյանը ներկայացնում է իր կողմից մշակված մեթոդական համակարգը, որը ներառում է սովորողների հաղորդակցական կարողությունները զարգացնող ընկալողական ու վերարտադրողական

տարատեսակ վարժություններ և առաջադրանքներ: Ատենախոսին հաջողվում է առաջադրել վարժությունների ընտրության սկզբունքներ:

Երրորդ «Նախագծային մեթոդի կիրառումը փոխներթափանցող բառերի ուսուցման գործընթացում» ենթազխում ատենախոսը ներկայացնում է բառապաշարային փոխներթանցման հաղթահարմանը միտված նախագծային մեթոդը: Գործնականում նա ներմուծում է բառապաշարային օրագիրը և պաստառ-շնորհանդեսը, որոնք բառաշարային փոխներթանցման հաղթահարման տեսանկյունից նորույթ են:

Չորրորդ «Մշակված մեթոդական համակարգի փորձարկում, արդյունքների վերլուծություն» ենթազխում ատենախոսը ներկայացնում է փորձարարական ուսուցման ընթացակարգերը, փորձարարական և ստուգողական խմբերը, բացահայտում է նախափորձարարական, փորձարարական և հետփորձարարական փուլերի իրականացման առանձնահատկությունները: Նրա կողմից իրականացված փորձարարական ուսուցման տվյալները հավաստի են և հիմնավորում են նրա կողմից մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը: Աշխատանքը առանձնանում է խոր վերլուծությամբ, հարցադրումների հստակ պարզաբանումներով, համապարփակ շարադրանքով և գիտական պատշաճ ոճով:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով: Բոլոր գլուխները և ենթազխույթները տրամաբանորեն փոխկապակցված են: Հոդվածները և սեղմագիրը արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսության մեջ հեղինակը տրանսֆերենցիայի (դրական փոխադրման) մասին խոսելիս (էջ 20) անդրադառնում է միայն տվյալ լեզվական երևույթի սահմանմանը, մինչդեռ աշխատանքը կշահեր, եթե ներկայացվեին տրանսֆերենցիայի ենթարկված բառապաշարային միավորների օրինակներ, վերլուծվեին դրանց առանձնահատկությունները և անցկացվեր գուգադրական համեմատություն դրանց և փոխներթափանցվող բառապաշարային միավորների հետ:
2. Ցանկալի կլիներ աշխատանքում տեսնել ատենախոսի կողմից մշակված և ներդրված մեթոդական համակարգի SWOT վերլուծությունը:
3. Յուրահատուկ և ծավալուն է ատենախոսի կողմից կատարված հայտորոշիչ թեստավորումը: Այդուհանդերձ, կարծում ենք՝ աշխատանքը միայն կշահեր և հնարավոր կլիներ ուրվագծել նոր օրինաչափություններ, եթե առանձին վերլուծության ենթարկվեին նաև թեստավորմանը մասնակից աղջիկների և տղաների պատասխանները:

4. Հարկ ենք համարում նշել, որ գրականության ցանկում ընդգրկված չեն ատենախոսության մեջ օգտագործված բառարանները: Բացակայում է նաև էլեկտրոնային ռեսուրսների մասին տեղեկատվություն տրամադրող առանձին ցանկը:

5. Ատենախոսության մեջ կան որոշակի լեզվական անճշտություններ և տեխնիկական վրիպակներ, որոնք ցանկայի է շտկել և վերանայել:

Նշված նկատառումները հայեցակարգային չեն և չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորություն:

Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ Հասմիկ Թաթուլի Բիշարյանի «Բառապաշարային փոխներթափանցման հաղթահարումն աշակերտների անզլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում» ատենախոսությունը ամբողջական, գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման հանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի (ՄԳ. 00. 02 թվանիշով) գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջներին, և նրա հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2024 թվականի մարտի 15-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 6):

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝

Առաջատար կազմակերպություն՝
Հայ - Ռուսական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
Ի.գ.դ., պրոֆեսոր

Շ. Ա.



Ա. Ա. Սիմոնյան

Հաստատում եմ՝ 15 մարտի 2024թ.
Հայ - Ռուսական (Սլավոնական)
համալսարանի գիտական քարտուղար, Բ.Գ.Թ.

Ռ.Ս. Կասաբարովա